

Վերջին հասկերն ալ թռչունները տարին.
 Յոգնած եմ ես երգել զրկանքն հիւղերուն:
 Կ'ուզէի ես ապրիլ միայն տանջուելու
 Զոհեր պէտք են երջանկութեան մարդկային.
 Աս սիրտ չունիմ վաղանցուկ վարդ ժողվելու
 Պըսակելու մահուան ճակատը կրկին:
 Կ'ուզէի ես կեանքի կանչել մեռելներն
 Արծաթ փողով տալ աւետիս յարութեան.
 Սակայն մարդիկ կը հնձեն նոր ծաղիկներ
 Յոգնած եմ ես միշտ փոքելէ գերեզման:

Քեմիա, 8 Յունուար 1943

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ

ՀԱՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

Ինչ որ քեզմէ դեռ պիտի գայ, կ'ընդունիմ ես
 Լուս, անտրտունջ, խորհուրդին դէմ ճակատագրիս.
 Կրնայ դեռ սիրտըս արիւնիլ ու գաղտնապէս
 Դեռ տանջուիլ կրնայ հոգիս...

Երբ աշունէն առաջ վարդերը թօշնեցան,
 Արտասուեցի երկնքին տակ անձրեւայոյզ.
 Ներէ՛ ինձի որ լսեց երգը մեղմածայն
 Աղօթասաց իմ շրթներուս...

Հրաջերմ ձեռքերըս բարձրացան քու երկնքիդ
 Իրենց արտում որբութիւնովը սրկիհին՝
 Ուր դառնութիւն եղաւ գինին...

Տո՛ւր վերըստին այս աղբիւրին ականակիտ
 Որ իմ հոգիս էր ատենօք,
 Իր մրմունջները քաղցրօրէն սիրամորմոք...

ԻՄ ԱՐԱԳԱԾ, ԲԱՐԻ ԼՈՅՍ

Իմ Արագած, բարի լոյս,
 Հըրաշքի պէս կը յայտնուիս աչքերուս,
 Երազի մէջ տեսած էի քեզ արդէն,
 Ու մրմնջած էի աղօթք մ'իմ սրտէն,
 Սուրբ Արագած, բարի լոյս...

Քաղցըր շունչովդ կը պարուրես իմ հոգին,
 Իմ Արագած, բարի լոյս,
 Բոյրը կ'առնեմ հին մանկութեանըս խունկին,
 Եւ ջինջ աղօթք մը կը յառնէ շրթներուս,
 Սուրբ Արագած, բարի լոյս...

Առաւօտուն բարի լոյս,
 Եւ իրիկուան քրքումին մէջ վարդալոյս,
 Ու գիշերին աստղերուն տակ ոսկեշող,
 Իմ Արագած, քեզ դարձող
 Հէք պանդուխտին աչքի լոյս...

ՎԵՐԱԴԱՐՁ

Տուն պիտի գամ առաւօտուն, կամ իրիկուան
 Կըրակին հետ, ճամբու ծարաւըս անցուցած
 Կախարդահոս լեռան ջուրէն ոսկենման.

Տուն պիտի գամ ձեռքերըս բաց:

Պիտի գամ լուս, ու երբ շարժին իմ շրթներս,
 Անոնք միայն պիտի հծծեն աղօթասաց.
 Բու սուրբ կարօտըդ պահելով հոգիէս ներս՝

Տուն պիտի գամ աչքերըս բաց:

Աչքերըս բաց արեւաշող քու ձըրագիդ,
 Ծուխիդ անշէջ հայրենավառ Ուրախութեան,
 Պիտի նստիմ սեմիդ վըրայ լուսաժպիտ՝
 Մայրը գտնող որբի նման:

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՍՈՒՍԱՆԵՐՍ ԼՈԿ ԻՆՁ ՏՈՒՆ

Իմ անսրբազ սրտիս աւեր
 Պուտ մը սերն իսկ ա՛հ կը բաւեր,
 Բայց չունեցայ կաթիլ մը ջուր,
 Որ յագենար ծարաւըս հուր:

Մըթութեան մէջ փնտռեցի ես
 Ճառագայթ մը սոսկ լուսակէզ,
 Արեւն անգամ մարած գըտայ
 Երբ միայնակ մըտայ աշխարհ:

Ու զըլացան ինձ ամէն բան
 Եւ ամէն բան գըտայ խոտան,
 Իմ Մուսաներս լոկ ինձ տըւին
 Սերոյ, կեանքի անուշ գինին ...:

Ֆիլատելֆիա, 24 Ապրիլ 1944